

**Եթե լինեն իրավական ակտեր՝ հանրաքվեի գործընթացը կասեցնելու համար, ԿԸՀ-ն կկասեցնի**

Մկրտչապետը՝ <https://armtimes.com/hy/article/182962>

Ապրիլի 5-ին նախատեսված հանրաքվեն հետաձգելու կամ կասեցնելու վերաբերյալ որևէ իրավական հիմք ԿԸՀ-ն այս պահին չունի: ՀԺ-ի հետ հարցազրույցում այդ մասին ասաց ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանը:

- Պարոն Մուկուչյան, կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված հետաձգվում են քարոզարշավները, միջոցառումները, ասուլիսները: Հնարավո՞ր է հետաձգվի հանրաքվեն: Քննարկվո՞ւմ է այս հարցը:

- Դա մեր գործառույթների առարկա չի հանդիսանում, ես նույնիսկ որպես մասնագետ որևէ տեսակետ չեմ կարող ներկայացնել: Նշանակված է հանրաքվե, իրավական հիմքը առկա է, սահմանված է ժամանակացույց՝ մեր գործառույթները իրականացնելու համար: Հիմա եթե կլինեն այլ իրավական հիմքեր՝ մենք կառաջնորդվենք այդ հիմքերով:

- Ի՞նչը կարող է լինել հանրաքվեի հետաձգման իրավական հիմք:

- Օրենքը նախատեսում է 2 ձևակերպում հանրաքվեի կասեցման հետ կապված՝ ռազմական կամ արտակարգ դրության հայտարարում: Նշվածով պայմանավորված, եթե համապատասխան ընթացակարգերով կլինեն որոշակի իրավական ակտեր, որոնք կվերաբերեն գործընթացը կասեցնելուն, այդ դեպքում կկասեցվի գործընթացը:

- Այս թեմայով վարչապետի հետ քննարկում ունեցե՞լ եք:

- Ես ասացի այն ամենը, ինչ այդ թեմայով ասելու էի:

- Բայց նաև ուզում եմ ճշտել՝ վիրուսի տարածմամբ պայմանավորված որևէ նախապատրաստական միջոցառում չե՞ք չեղարկել:

- Մինչ այս պահը ժամանակացույցով նախատեսված միջոցառումները հերթով իրականացնելով գնում ենք, որովհետև ընտրական գործընթացը մի գործընթաց է, որի ժամանակահատվածում միջոցառումները իրականացվում են օրենքով սահմանված որոշակի ժամկետային սահմաններում: Եվ աշխատանքների ծավալն այնքան մեծ է, որ յուրաքանչյուր օրվա համար նախատեսված աշխատանքը պետք է նշված օրը կատարվի: Այսինքն մենք չունենք անսահմանափակ ժամանակահատված, որ հնարավոր լինի տարբեր գործընթացներ տարբեր պատճառներով պայմանավորված՝ չկատարել, թողնելով հետոյին: Ծավալները եւ ժամկետները այնպիսին են, որ հետագայում այսօրվա բացը չի կարող լրացվել, եթե անգամ կրկնակի, եռակի ջանք ներդրվի:

- Շուտով քարոզարշավի մեկնարկի մեկ ամիսը կլրանա: Ինչպե՞ս եք գնահատում այս ընթացքը: Կա՞ն արձանագրված խախտումներ, շա՞տ եք ստանում ահազանգեր:

- Գիտեք, սկզբնական փուլում քարոզարշավը շատ ավելի հանդարտ էր, եւ դա թերեւս պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն ընտրությունների՝ հանրաքվեի դեպքում քարոզարշավի համար նախատեսված է շատ մեծ ժամկետ՝ 41 օր: Եվ յուրաքանչյուր կողմ ինքն է որոշում՝ ինչպես կազմակերպել եւ անցկացնել քարոզարշավը: Լրատվական կայքերում, տարբեր տեղեկատվական աղբյուրներում հայտնվող տեղեկություններին անգամ մենք փորձել ենք հետեւել, եւ եթե դրանցում հայտնաբերվել են ինչ-ինչ

հանգամանքեր, շատ օպերատիվ կարգով փորձել ենք քննարկել: Խնդիրներ նկատելու դեպքում անմիջապես ձեռնարկվել են միջոցառումներ: Ի դեպ, պետք է նկատել, որ քարոզչական կողմերի հետ աշխատանքը ամենօրյա բնույթ է կրում: Պետք է փաստել, որ գրավոր դիմումներ մինչ այժմ քարոզչության ընթացքի հետ կապված ստացված չեն, իսկ բոլոր սահմանափակումները, որ եղել են, կամ մամուլի հրապարակումները, դրանց բոլորի կապակցությամբ շատ արագ արձագանք եղել է:

- **Վերջերս ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը ԱԺ-ում ի պաշտոնե հանդես գալիս կոչ էր արել գնալ տեղամաս և «Այո» քվեարկել, ինչից հետո ԿԸՀ-ն կապ էր հաստատել Պապիկյանի հետ և խորհուրդ տվել պահպանել «Հանրաքվեի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ մասի պահանջները, որով արգելվում է ի պաշտոնե հանդես գալիս քարոզչություն իրականացնել...**

- Արձագանքը եղավ, մենք շատ հրապարակային ներկայացրինք այն միջոցառումները, որոնք ձեռնարկվել ենք: Շատ հաճախ լինում են դեպքեր, երբ որ դրանք ամենատարբեր գնահատականների են արժանանում, նույնիսկ այդ հանգամանքները ԿԸՀ-ում քննարկման առարկա դառնում են: Եթե հանձնաժողովը դրանցում գտնում է ինչ-ինչ խնդիրներ, որոնցով պայմանավորված անհրաժեշտ է համարում վարույթի հարուցումը, ապա միանշանակ կհարուցվի: Եթե հանձնաժողովը այդպես չի գտնում, բնական է, որ նշված հանգամանքներով պայմանավորված՝ միջոցներ չեն ձեռնարկվում և վարույթներ չեն հարուցվում, ինչը բնական է, որ չի կարող զրկել կողմերին նման մոտեցման դեպքում ինքնուրույն դիմումներ ներկայացնելու հնարավորություն ընձեռել:

- **Պարոն Սուկուչյան, օրինակ Պապիկյանն ինչպե՞ս արձագանքեց խախտման վերաբերյալ ձեր դիտարկմանը: Սովորաբար կողմերը ընդունո՞ւմ են սխալը:**

- Էսպես ասեմ՝ մինչ այժմ նկատած խնդիրները, որոնց շուրջ հանձնաժողովը բարձրաձայնել է կամ քարոզչական կողմերի ուշադրությունը հրավիրվել հանգամանքների վրա՝ բոլորը ընդունվել են:

- **Վարչապետի՝ ուղղաթիռով մեկնումը քարոզարշավի, շատ քննարկվեց: Դա խախտո՞ւմ էր, թե՞ ոչ:**

- Ես կարծում եմ՝ ամբողջական պատասխան այդ հարցին արդեն տվեցի, որ շատ ու շատ հանգամանքներ, որոնք հրապարակվում են, որոնց վերաբերյալ լինում են տարբեր գնահատականներ, մեկնաբանություններ, հանձնաժողովը դրանք ուսումնասիրում է: Եթե դրանում հայտնաբերեր, ապա դրանց մասին վարույթ հարուցած կլիներ, հրապարակային իրազեկված կլիներ նաև հանրությունը: Եթե չկա նման խնդիր, կարծում եմ, պետք է ենթադրել, որ հանձնաժողովը դա չի գնահատել այնպես, ինչպես առանձին անձանց կողմից դա փորձ է արվել ներկայացնել:

- **Եթե «Այո»-ի կողմը ակտիվ քարոզարշավ է անցկացնում, ապա «Ոչ»-ը քարոզարշավ չի իրականացնում: Այս իմաստով լրատվամիջոցներն էլ ստիպված են անհավասար լուսաբանել քարոզչությունը: Սա հետագայում կարո՞ղ է որպես լրատվամիջոցների կողմից անհավասար լուսաբանում արձանագրվել զեկույցներում:**

- Գիտեք, խնդիրը հետևյալն է: Ինչպես նշեցի, յուրաքանչյուր կողմ ինքն է որոշում ինչպես իրականացնել իր քարոզչությունը: Երբ օրենքը սահմանում է կանոնակարգումներ՝ կապված քարոզչության ժամանակահատվածի հետ, այստեղ կարելու է հավասար հնարավորությունների ապահովման խնդիրը: Այսինքն եթե քարոզչության մի կողմը ունի

հավասար հնարավորությունն որեւէ միջոցով իր տեսակետը ներկայացնելու, ապա մյուս կողմը պետք է այդ նույն միջոցին նույն պայմաններով հասանելիություն ունենա: Բայց նա ինչ ծավալով կօգտվի, կօգտվի, թե չի օգտվի, բնական է՝ դա արդեն բոլորովին այլ խնդիր է եւ մենք արդեն չենք կարող բխեցնել հավասարության սկզբունքից: Տեսեք, որպէս օրինակ, Հանրային հեռուստաընկերությամբ սահմանված է վճարովի եւ անվճար եթերաժամի տրամադրում: Հիմա պատկերացնենք, որ ունենք որեւէ կողմ, որը ոչ վճարովիից, ոչ անվճարից չի օգտվում: Սա մեխանիկորեն, ինքնին չի կարող որակվել որպէս հավասարության խախտում, որովհետեւ հնարավորությունը ապահովված է: Եթե չլինէր հնարավորություն, այսինքն դա տրամադրվեր մի կողմին, մյուս կողմի համար լինէին խոչընդոտներ, բարդություններ՝ դա կլինէր հավասարության խախտում:

**- Այսինքն՝ ՁԼՄ-ին չեն կարող մեղադրել, որ հավասար չի լուսաբանվում:**

- Գիտեք, եթե կողմը ցանկանում է, որ իրեն լուսաբանեն, բայց դա մերժվում է, որովհետեւ նա հանդիսանում է քարոզչության այս կամ այն կողմ՝ դա բոլորովին այլ իրավիճակ է: Եթե իր ստրատեգիայով պայմանավորված կողմը որեւէ միջոցառում չի անում՝ ակնհայտ է, որ չի էլ կարող լինել որեւէ լուսաբանում:

**- Պարոն Մուկուչյան, ԿԸՀ-ն շարժվում է ըստ ժամանակացույցի՝ իրականացնելով նախապատրաստման միջոցառումները: Այս պահին ո՞ր փուլում եք:**

- Մենք առաջիկայում ունենք բավականին ծավալուն գործընթաց, դա տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների դասընթացների կազմակերպումն է: Ամբողջ հանրապետության տարածքում պետք է իրականացվի ուսուցում, ժամկետները սահմանափակ են, եւ նախատեսվում է, որ ուսուցմանը պետք է մասնակցեն բոլոր հանձնաժողովների անդամները՝ շուրջ 14 000 քաղաքացու մասին է խոսքը: Դրանիցից զատ առկա է մասնագետների վերապատրաստման դասընթացների կազմակերպման խնդիր: Խոսքն այն մասնագետների մասին էի, որոնք տեխնիկական սարքերն են սպասարկում տեղամասային կենտրոններում, այդտեղ էլ խոսքը մոտ 4000 քաղաքացու մասին է:

**- Ըստ ժամանակացույցի՝ հանրաքվեի քվեաթերթիկի նմուշը սահմանվելու է մարտի 26-ին: Այս պահին դուք կարո՞ղ եք ասել՝ մոտավորապէս ի՞նչ ձեւակերպում է ունենալու քվեարկության առարկա հարցը:**

- Ես չեի ուզենա այս պահին անդրադառնալ դրան, ամեն ինչը ժամկետների մեջ կիրականացվի, կիրապարակվի:

**- Լրատվամիջոցները հարցումներ են անում, եւ պարզվում է, որ մարդկանց մի մասը չգիտի՝ ինչին պետք է «այո» կամ «ոչ» ասի:**

- Նկատի ունենանք, որ Հանրաքվեի մասին օրենքի պահանջներին համապատասխան տեղամասերում փակցված է լինելու է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, եւ եթե նույնիսկ քարոզարշավի ողջ ընթացքում մարդիկ չեն հասցրել տեղեկանալ այդ մասին, ապա այդ օրը կձանձրանան:

**- Վարչապետը վերջերս հանրաքվեի Հռչակագրի նախագիծ հրապարակեց: Հնարավո՞ր է դա լինի հանրաքվեի դրվող հարց:**

- Հանրաքվեի դրվող հարցը շատ հստակ ձեւակերպված է ՀՀ նախագահի հրամանագրով:

**- ՀՀ Սահմանադրության 207-րդ հոդվածի համաձայն՝ հանրաքվեի դրված ակտն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս,**

**քան հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ քառորդը: Քանի որ արդեն նախնական ցուցակները հրապարակվել են՝ կարող էք ասել, թե հանրաքվեի դրված ակտը որքան «կողմ» ձայնի դեպքում կհամարվի ընդունված:**

- Այդ թվերը կան, յուրաքանչյուրը կարող է դատողություն անել, բայց քանի որ այդ թիվը դեռ կարող է փոխվել, ես չեմ ուզենա հրապարակել որեւէ տվյալ, որովհետեւ իմ կողմից հնչեցված ցանկացած թիվ ընկալվելու է որպես պաշտոնական:

**- Հանրաքվեի առանձնահատկությամբ պայմանավորված՝ կուսակցությունները կարող են դիմել դիտորդության համար: Ունե՞ք հայտ որեւէ կուսակցությունից: Միջազգային դիտորդների դիմումներ կա՞ն արդեն:**

- Այս պահին չունենք դիմող կուսակցություն: Մեզ դիմել է 6 ՀԿ, որոնց անունից դիտորդություն իրականացնելու իրավունք ստացել է ընդհանուր առմամբ 452 քաղաքացի: Միջազգային դիտորդներից այս պահին դեռեւս հայտեր չունենք: Ժամանակ դեռ կա եւ փորձը ցույց է տալիս, որ դիմումները ավելի շատ ստանում ենք վերջնաժամկետին մոտ: